ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 68

«13» 09 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և Վայոց ձորի մարզի դատախազության դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22 N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանով հաստատված 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին բաժնի 2-րդ գլխի 3-րդ կետի «ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ 3» բառերը փոխարինել «ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ 2», բառերով, նույն գլխի «Ընդամենը 5» բառերը՝ «Ընդամենը 4» բառերով,

2) 2-րդ բաժնի «ՀՀ գլխավոր դատախազությունում Ընդամենը 126» բառերը փոխարինել «ՀՀ գլխավոր դատախազությունում Ընդամենը 125» բառերով,

3) 4-րդ բաժնի 32-րդ գլխի 124-րդ կետի «դատախազության դատախազ 1» բառերը փոխարինել «դատախազության դատախազ 2» բառերով, նույն գլխի «Ընդամենը 3» բառերը՝ «Ընդամենը 4» բառերով,

4) 4-րդ բաժնի «Ընդամենը մարզերի դատախազություններում 108» բառերը փոխարինել «Ընդամենը մարզերի դատախազություններում 109» բառերով,

5) 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 126» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 125» բառերով, իսկ նուն բաժնի «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 108» բառերեը՝ «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 109» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի այաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ